Ժ ՏԱՐԻ ՇԱԲԱԹ 16 ՅՈՒԼԻՍ 1905—ՎԱՐՆԱ ԹԻՒ 47

ԳԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

երկու թիւը մէկ ծրարով

Տարեկան ... 14 Ֆր

Վեցամսեայ ... 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տոլար

Վեցամսեայ 1. 50 »

ԿԱՆԽԻԿ

Ծանուցման տող 20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ Ա[illegible] Ի ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Réduction du journal «Ararounk» VARNA (Bulgarie)

Редакция на вѣстникъ «Араѣунк» ВАРНА

Գրուրդուիլեր եւ չեն տրուիր

Bibl. Patr. Arm. Dio G. Aucuchéryan Mechitarist Vienne

ՁԱՇՆ ԲԱՐԲԱՌՈՅ ՅԱՆԱՊԱՏԻ

Արտասահմանեան հայ մամուլը ըստ իւր պարտականութեան քննելով մեր մայր հայրենիքի և գաղթավայրերու ազգային անհանգիստ վիճակը, դարմաններ կը խորհի և մերթ միջոցներ ցոյց կուտայ հայութեան սպառնացող վտանգները դիմագրաւելու, անոնց յաղթելու և մեր ազգային գոյութիւնը ամուր հիմերու վրայ ապահովելու նախանձախնդրութեամբ։ Բայց հայ մտաւորականներու կամ խմբագիրներու կողմէ ցոյց տրուած այդ միջոցները իրականացնելու համար ընթերցող հասարակութիւնը «այո՛, լաւ է ըսեր, շատ լաւ կըլլայ եթէ գործադրուի» ըսելէ անդին գործնական ոչ մէկ քայլ առնել չը խորհիր։ Միշտ նոր առաջարկներ, նոր միջոցներ կը գրուին, կը կարդացուին, կը խօսուին ու կանցնին կերթան մոռացութեան գիրկը անդառնալիօրէն։

Անցեալները Հայկարանի մը կամ արտասահմանի մէջ հայկական գօլէժի մը հաստատման խօսքը հրապարակ նետուեցաւ։ Միւնէնոյն ատեն Պուլկարիան և Ռումանիան առաջնորդութիւններով օժտելու բաղձանքը յայտնուեցաւ։ Երէկ հայկական համաժողով մը գումարելու անհրաժեշտութիւնը ցոյց տրուեցաւ։ այսօր ալ արտասահմանի մէջ վարժապետանոց մը հաստատելու օգտակարութիւնը կը մատնանշուի։ Բայց այս բոլորը, ամէնի կողմէ անհրաժեշտ պէտքեր նկատուելով հանդերձ, առանց գործնական քայլի մը յանգելու կը մոռցուի ու «ձայն բարբառոյ յանապատի» կը մնայ։

Ի՞նչու այսպէս։

Մենք այս «ի՞նչու»ին պատասխանը կը գտնենք սա բացատրութեան մէջ, թէ եղած առաջարկութիւնները թէև անհրաժեշտ ամէն հայ համայնքի համար, բայց անոնց գործադրութիւնը մեծ զոհողութեանց կարօտելով, առանձին համայնքի մը կարողութեան սահմանէն շատ բարձր է, և բոլոր հայ գաղութներու ուժերուն համախմբումովը և համերաշխութեամբը միայն կարելի կրնայ ըլլալ։ Իսկ ուժերու այս համախմբումը ձեռք բերելու համար մէն մի գաղութ իր տեղական կազմակերպութիւնը ունենալու է և այս կազմակերպութեանց իրաքանչիւրին գլուխը գտնուելու են այնպիսի անձնաւորութիւններ որոնք թէ՛ իրենց ենթակայ հասարակութեան մեծագոյն մասին համակրանքը ունենան և թէ անձնուէր և անխոնջ աշխատողներ ըլլան։

Մեր ազգային ներկայ վիճակին մէջ մեր գաղութային կազմակերպութիւնը միայն կրօնական ձևի տակ կրնանք իրականացնել ու անոր պաշտօնական հանգամանք տալ։ և ճիշդ այս հիման վրայ է որ մենք քանիցս այս սիւնակներուն մէջ պնդած ենք թէ ամէն հայ գաղթականութիւն Առաջնորդական Վիճակ մը կազմելու է բանիբուն ու ժրաջան Առաջնորդով մը։ Անգամ մը կարևոր հայ գաղութներ այս ունենալէ յետոյ, այլևս կը դիւրանայ Հայկարանի, հայկական, գօլէժի, վարժապետանոցի և հայկական համաժողովի օգտակար առաջարկութիւններու գործադրութիւնը։ Ուստի մենք կրկին խորհուրդ կուտանք բոլոր հայ գաղթականութեանց, որ հոգ տանին նախ առաջնորդական կազմակերպութեամբ մը օժտուելու։ Եթէ ոչ արտասահմանի մէջ ալ հայութեան ապագան կը մթագնի օրէ օր, և բոլոր ազգօգուտ առաջարկներ, ինչպէս մինչև ցարդ, կը մնան «ձայն բարբառոյ յանապատի»։

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ

Յունիսի 23-ին Վեհ. կաթողիկոսը ժամանեց Թիֆլիս տեսակցելու համար Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վարանցով-Դաշկովի հետ։ Տեսակցութիւնը նշանակուած էր պալատում յունիսի 25-ին օրուայ ժամը 2 ու կէսին։ Վերջին տասնամեակում այս առաջին անգամն էր, որ հայոց եկեղեցու Պետար երկրի բարձր իշխանութեան կողմից ընդունուեց բան հնազանդ կարգերի եւ առանձին շքով։

Յիշեալ օրը փոխարքայի պալատից վեհարան ուղարկուեց 30 կազակից բաղկացած պատուաւոր պահնորդախումբ դրօշակով։ Հանդիսաւոր գընացքը դէպի պալատ ուղեւորուեց հետեւեալ կարգով. առաջից գնում էին երեք կազակ դրօշակով. նրանց ետեւից կառքերով գնում էին երկու քահանայ կրելով հայրապետական խաչն ու գաւազանը եւ դիւանապետ գաւազանակիր Կորիւն վարդապետը մի ուրիշ վարդապետի հետ. ապա պատուաւոր պահնորդախմբով շրջապատուած գնում էր Վեհափառի փակ կառքը, որի ետեւի կողմը կանգնած էին չաթիրները կարմրազգեստ եւ գառան մորթու սպիտակ գըլխարկներով. Նորին Օծութեան կառքին հետեւում էին Թիֆլիսի թեմական առաջնորդ Դարեգին եպ. Սաթունեանը, Գէորգ արքեպ. Սուրէնեանը եւ Յուսիկ վարդապետը կառքերով։

Պալատի դռան առաջ Վեհափառին դիմաւորեց Փոխարքայի թիկնապահը, իսկ սանդուղքի գլխին ինքը Փոխարքան։ Նորին Պայծառափայլութիւնը համբուրելով Նորին Օծութեան աջը եւ առնելով նրա օրհնութիւնը, իւր զոհունակութիւնը յայտնեց, որ Հայաստանեայց հին Եկեղեցու ծերունազարդ Պետին տեսնում է իւր յարկի տակ։ Այնուհետեւ Փոխարքան հրաւիրեց Վեհափառին ընդունարան, ուր մտաւ նաեւ Փոխարքայի օգնական գաղտ. խորհդ. Սուլթան Ալիեւ Գիրէյը։ Վեհափառի թարգմանն էր Կովկասեան գրաքննական տաճանի արեւելեան լեզուների ատաղ գրաքննիչ պ. Ա. Քիշմիշեանը։ Վեհ. Կաթողիկոսն իր ուրախութիւնը յայտնեց, որ, վերջապէս, իրեն աջողուեց տեսակցել Փոխարքայի հետ, որի լուսամիտ եւ իմաստուն հոգացողութեանն է յանձնել Թագաւոր Կայսրը Կովկասը։ «Այս փափաքն ես ունէի Ձերդ Պայծառափայլութեան ժամանումի օրից,— աւելացրեց Նորին Օծութիւնը,—բայց հիւանդութիւնս արգելից փափագս կատարել անմիջապէս։ Եւ անաւասիկ հէնց որ փոքր ինչ տպաքինեցայ, չատպեցի կատարել փափագս, որպէսզի անձամբ իմ կողմից եւ ամբողջ հայ ազգի ու եկեղեցու կողմից շնորհաւորեմ Ձերդ Պայծառափայլութեան բարձր պաշտօնը եւ օրհնեմ Ձեզ, բարեմաղթելով որ աջողութեամբ ի կատար ածէք Թագաւոր Կայսրի կողմից Ձեզ յանձնուած դժուարին ու մարդասիրական գործը»։

Փոխարքան շնորհակալութիւն յայտնեց եւ ասաց, որ ինքն եւս անկեղծ ցանկութիւն ունէր այցելելու Նորին Օծութեանը Ս Էջմիածնում եւ յոյս ունի, որ անշուշտ կը կատարի իւր ցանկութիւնը։ Նորին Պայծառափայլութիւնն ընդ սմին ցաւ յայտնեց, որ ինքը հայերէն չգիտէ, որպէսզի հնարաւորութիւն ունենայ ծանօթանալու Ս. Էջմիածնի հարուստ մատենադարանում պահուող հայերէն հին գրչագրերի, ինչպէս եւ Նորին Օծութեան երկերի հետ։

Այնուհետեւ խօսակցութիւնը դարձաւ հայոց դպրոցական եւ եկեղեցական կալուածական խնդիրներին։ Վեհափառ Կաթողիկոսը խնդրեց փութացնել այդ խնդիրների լուծումը, որոնց մասին ինքը զեկուցագիր է տուել Նորին Կայսերական Մեծութեանը։ Փոխարքան պատասխանեց, որ ինքն եւս հոգում է շուտափոյթ լուծում տալու այդ խնդիրներին եւ շատ կարելի է որ առաջիկայ աշունքից վերաբացուեն Հայոց եկեղեցական ծխական դպրոցներն այնպէս, ինչպէս որ ցանկանում է Նորին Օծութիւնը։

Տեսակցութիւնը տեւեց կէս ժամ։

Այնուհետեւ Փոխարքան հրաւիրեց Վեհափառին իւր ամուսնու՝ կոմսուհի Ելիզաւետա Անդրէեւնայի մօտ, որտեղ Նորին Օծութիւնը եւ ուղեկից եպիսկոպոսներն ու վարդապետները հիւրասիրուեցին սուրճով եւ անուշեղէններով։ Այստեղ Վեհափառի թարգմանի դերը կատարում էր Յուսիկ վարդապետը։ Վեհափառն այստեղ մնաց մօտ 40 րոպէ եւ վերադարձաւ վեհարան նոյն կարգով։

Կէս ժամից յետոյ փոխարքայ կոմս Ի. Ի. Վարանցով Դաշկովն ամուսնու հետ փոխ-այցի գնաց Վեհ. Կաթողիկոսի մօտ։ Վեհափառը Նոցին Պայծառափայլութիւններին ընդունեց մեծ դահլիճում եւ հրաւիրեց նրանց ծաղկեայ դահլիճը, ուր բարձր հիւրերին թէյ առաջարկուեց։ Տեսակցութիւնը տեւեց մօտ 25 րոպէ։ Զրու-

ցաբութեան միջոցին Վեհափառը Փոխարքայի ուշադրութիւնը հրաւիրեց, ի միջի այլոց, Վանքի աւագ եկեղեցու գաւթում թաղուած հայ ազգի զօրավարների՝ Լորիս Մելիք-եանի, Տէր-Ղուկասեանի, Լազարեանի եւ Շելկովնիկեանի գերեզմանների վրայ։ Փոխարքան յոյս յայտնեց, որ ապագայում եւս հայ ազգը ռուսաց բանակին կըտայ այդպիսի քաջամարտիկ զօրավարներ։ Կոմսուհի Ելիզաւետա Անդրէեւնան ցանկութիւն յայտնեց համբուրելու Ս. Յակոբայ մասունքը որի համար ամուսնու հետ իջաւ Վանքի տաճարը։ Այնուհետեւ նոցին Պայծառափայլութիւնները դիմեցին վերոյիշեալ զօրավարների գերեզմանները եւ, Վեհափառ Կաթողիկոսի օրհնութիւնն առնելով, վերադարձան պալատ։

Հետեւեալ օրը Վեհափ. Կաթողիկոսը ցանկացաւ այցելել Փոխարքայի օգնականներ Սուլթան-Կրիմ Գիրէյին եւ գեն. Շերբինկինին, սակայն տկարութեան պատճառով չը կարողացաւ իրագործել իւր փափագը։ Նոյն օրը պ. Սուլթան Կրիմ-Գիրէյն այցելեց Վեհափառին եւ մօտ մի ժամ տեսակցութիւնը ունեցաւ Նրա հետ։ Խօսակցութիւնը վերաբերում էր գլխաւորապէս հայոց եկեղեցական գոյքերի եւ դպրոցների խնդիրներին, որոնց վերաբերմամբ Փոխարքայի օգնականը նոյն հաւաստիացումներն արաւ, ինչ որ Փոխարքան, աւելացնելով, սակայն, որ դպրոցների մասին փոխադարձ համաձայնութիւն պիտի լինի որոշ կէտերի վերաբերմամբ։ Գեն. Շերբինկինն եւս այցելեց Վեհափառին եւ երկարատեւ խօսակցութիւն ունեցաւ Նրա հետ։

Պ. Սուլթան Կրիմ Գիրէյին եւ գեն. Շերբինկինին նոյն օրը փոխայցի գնացին Վեհափառի կողմից Գաբեգին եւ Նահապետ եպիսկոպոսները։

ՆՈՐ-ԴԱՐ

ՏՓՂԻՍԻ ԴԷՊՔԵՐԸ

—o—

Տփղիս 3 յուլիս

Յունիսի 20ից մինչեւ 28-ը, մի ամբողջ շաբաթ, Թիֆլիզում տիրում էր ընդհանուր գործադուլ։ Քաղաքի կեանքը կանգ էր առել միանգամայն։ Փակ էին խանութները գրեթէ առանց բացառութեան, բացի հացավաճառների խանութներից։ Չէին բանում ոչ գործարանները, ոչ ելեկտրական տրամվայը, ոչ աւաքլեան ձիաքարշը, ոչ ֆունիկուլեօրը, ոչ պարոմը։ Չէր բանում ոչ մի տպարան, ուստի Թիֆլիսը մի ամբողջ շաբաթ մնացել էր առանց տեղական լրագրների եւ հեռագրների, լոյս չէր տեսնում նոյն իսկ պաշտօնական «Կաւկազ»-ը։ Գործադուլ արին նոր քաղաքային ծառայողները, ի միջի այլոց լապտերավառները, ուստի մի երկու գիշեր փողոցները փաղուած էին խորին խաւարի մէջ. միւս գիշերները փողոցային լապտերները վառում էին ոստիկանների ձեռքով։ Ագիտատորներն աշխատում էին փակել տալու նաեւ ջրանցքը, բայց այդ բանը չյաջողուեց իշխանութեան ձեռք առած միջոցների շնորհիւ։ Անպող անցաւ նաեւ հացի խանութները փակել տալու փորձը։ Բայց մսի խանութները փակուած էին. միս ուրիշ չէր տրւում, այն էլ միայն ոչխարի միս։ Շատերն առանց հացի մնալու երկիւղից մի քանի օրուայ հացի պաշար էին տուն տանում։ Շատերն էլ պուդերով ալիւր էին գնել առաջուց՝ տանը թխել տալու համար։ Բնակչութիւնն անհանգիստ եւ սպասողական դրութեան մէջ էր, պաշարուած ինչ-որ գալիքի երկիւղով։ Շատերն ամբողջ օրը մնում էին տանը փակուած։ Փողոցներում կանգնած էին դոնապաններն իրենց մահակներով, ոստիկանների թիւը աւելացած էր։ Շրջում էին խումբ խումբ կազակներ։ Նկատւում էր, որ քաղաքում հետզհետէ աւելանում է զօրքերի թիւը։ Յունիսի 24-ին, երեկոյեան ժամը մօտ 6½-ին, քաղաքը թնդաց մի ահարկու ձայնով։ Կարծես թնդանօթ արձակեցին. բանից երեւաց, որ Սայդատսկի բազարում ռումբ էին նետել կազակների պահակախմբի վրայ։ Մի կազակ սպաննուել միւսը մահացու կերպով վիրաւորուել էր։ Բացի սրանից վիրաւորուեցին եւ ուրիշները։ Նոյն օրը, երեկոյեան ժամը մօտ 9-ին, հինգերորդ ռումբը պայթեց Օյլգինսկայա փողոցում։ Վիրաւորելով երկու դոնապանի եւ ոստիկանի, որոնք նոյն գիշերը տեղն հիւանդանոցում, եւ ուրիշ մի քանի անձերի։ Յունիսի 26-ին 10-րդ քաղաքամասում գտնուեց ռումբերի մի պահեստ։ Բացի դրանից, նոյն օրը, «Կաւկազ»-ի ասելով, բռնուեց մի օրիորդ, որի ձեռքին երեք ռումբ կար։ Յունիսի 27-ը, երկուշաբթի, ընդհանուր գործադուլի վերջին օրն եղաւ։ 28-ին գործադուլը դադարեց եւ այդ օրն էլ պատերին կպցրած յայտարարութիւններով Թիֆլիսի քաղաքն իւր դաւառով յայտարարուեց պատերազմական դրութեան մէջ։ Ժամանակաւորապէս ընդհանուր նահանգապետ նշանակուած գեն. Եացկեւիչը։ Ներկայումս քաղաքը պահպանում է զօրքերով. ամեն մի փողոցում կը տեսնէք զինուորներ եւ կազակներ որոնց իրաւունք է տրուած խուզարկելու անցուդարձ անողներին։ Առ այժմ խաղաղութիւն է տիրում քաղաքում։

—Բագուի նահանգապետ իշխ. Նակաշիձէի սպաննութիւնը հանգուցեալի ցեղակիցներից ոմանց առիթ է տուել թշնամութիւն սերմանելու հայերի եւ վրացիների միջեւ, որպիսին արդէն սերմանուած է Թուրքերի եւ հայերի միջեւ եւ իւր առատ պտուղներն է տալիս։ Այս քաջամարտելի քաղաքականութեան դէմ բողոքելու իւր պարտքն է համարել վրաց ինտելիգենցիայի ամենայաւելի մասը։ Այդ ինտելիգենցիայից աւելի քան 300 հոգի «Զերնմ Պոր.» ռուս լրագրի մէջ տպագրել են մի բողոք, որի մէջ ասուած է, որ մի քանի չինովնիկներ եւ արդիւնաբերողներ, որոնք հրապարակում թագցնում են իրենց անունը, բայց ի լուր ամենեցուն դամբանականներ են արտասանում ինչ որ վրաց հասարակութեան կողմից աշխատում են ցոյց տալ, թէ Բագուի նահանգապետին սպաննութեան գործն ուղղուած է վրաց ազգի դէմ եւ վիրաւորում է այդ ազգի պատիւը. այսպիսով նրանք ուզում են ցոյց տալ, թէ հայերը վրաց ազգութեան թշնամիներ են։ Վրաց ինտելիգենցիայի բողոքող մասը յայտարարում է իւր բողոքի մէջ, որ յիշեալ չինովնիկներն ու արդիւնաբերողները գործն այդպէս յուսալով խաւար ոյժերին առիթ են տուել մի կոչ հրատարակելու, որ «վրացիները միանան Թուրքերի հետ եւ կոտորին հայերին»։ Այս վերջին հանգամանքը, —ասում են բողոքող վրացիները,— աւելի եւս սաստկացնում է զայրոյթը Բագուի այն վրացիների դէմ, որոնք քաջութիւն չունին իրենց միտքը յայտնելու պարզորոշ եւ շահագործում են վրաց ազգի անունն իրենց նպատակների համար։

—Կառավարչական շրջաններում, մայրաքաղաքի թերթերի ասելով, խնդիր է յարուցուած ընդհանուր ներում շնորհելու քաղաքական յանցաւորներին։ Այդ ներումը իբր թէ պիտի յայտարարուի այն օրը, երբ ժողովի կը կոչուի ռուսական պարլամենտը։ Կարծւում է, որ եթէ այս միջոցը ի գործ դրուի, պարլամենտն այլ եւս հնարաւորութիւն չի ունենայ ապագայում պատասխանատուութեան կոչելու կառավարութեան անդամներին վերջին տարիների անցքերի եւ գործողութիւնների համար։ Եթէ ճշտուի այս լուրը, ապա պէտք է բացառիկ երեւոյթների կարգը դասել այն հանգամանքը, որ ընդհանուր ներման ձեռներէցը հանդիսանում է բրոկրատիան։

—Թիֆլիսի քաղաքային խորհրդի յանձնարարութեամբ, իրաւասու պ. Աբաբէան կազմել է մի ծրագիր, որով պէտք է հիմնուի քաղաքային միլիցիա բնակչութեան կեանքն ու գոյքը պաշտպանելու համար փողոցային այն սրիկաների դէմ, որոնք այս խառն ժամանակներում զինւում են կայսրութեան բոլոր քաղաքներում ինչ որ մութ ոյժերի թելադրութեամբ։ Ըստ այդ ծրագրի, միլիցիան բաղկացած պիտի լինի 300 կամաւոր քաղաքացուց, բաժանուած զանազան թաղերի վրայ։

—Ռոստովի թերթերի ասելով, տեղական ոստիկանութիւնը բացայայտել է, որ այնտեղ շատ զէնք եւ փամփուշտներ են գնում Կովկաս ուղարկուելու համար։

—Յունիսի 30-ին տեղի ունեցաւ օր. Իշխանեանի թաղումը. Քաղաքը պատերազմական դրութեան մէջ յայտարարուած լինելու պատճառաւ, հանգուցեալի դագաղը ինչպէս անից դէպի եկեղեցի, այնպէս եւ եկեղեցուց դէպի գերեզմանատուն փոխադրուեց զօրքով շրջապատուած. ոչ ոքի թոյլ չտրուեց մատակցելու յուղարկաւորութեանը. բացի հանգուցեալի հարազատներից։

ՆՈՐ-ԴԱՐ

ՌՈՒՍ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

[Շար. նախորդ թիւէն]

Դ.—Զեռք առնել ընդհանուր միջոցներ ու տրամադրութիւններ գոյութիւն ունեցող օրէնքներու եւ կանոններու բարոյ գործադրութեան համար (էջ 4)

Ե.—Զեռք առնել ներքին ընդհանուր միջոցներ բացառիկ պարագաներու մէջ (էջ 5)

Զ.—Պետական հասոյթի եւ ծախքի պիւտճէ հաշիւներ եւ տուրքերու բաշխումներ այնպիսի տեղեր ուր զէվրաթվօներու հաստատութիւններ մուտ գտած չեն։ (էջ 8)

Է.— Համարատուութիւններ. Ա. Պիւտճէի գործադրութեան վերաբերեալ պետական հակակշռի գործողութիւններ. բ. Ելեւմտական նախարարութեան անտուկներու վիճակը. գ. Պետական դրամատան, պետութեան ինայողական անտուկներու եւ պետական գանձին տարեկան հաշուեկշիռները։

ԺԶ.—Զէմսթվոներու եւ քաղաքապետական ժողովներու վճիռներուն, եւ պետութեան բնհանուր պէտքերուն չհամապատասխանող կամ տեղացիներու շահերուն յայտնապէս վնասող պատգամաւորներու տրամադրութեանց ջնջման կամ փոփոխման վերաբերեալ գործեր, այն պարագային երբ նմանօրինակ ջնջում կամ բարեփոխութիւն Զէմսթվոյի եւ քաղաքապետութեան կողմէն նախաձեռնուած ու սահմանուած ցուցիչներուն բարեփոխութիւն մը կը պատճառէ. նոյնպէս Զէմսթվոներու, կառավարութեան կամ նահանգին ի հաշիւ պետութեան ծախքերէն ոմանց վերժումը կամ Զէմսթվոներու ըլլալիք դրամական տարբեր նպաստը։

ԺԹ.—Մասնաւոր օրէնքներու եւ վեհապետական հրամաններու համաձայն ներկայացուած գործեր, (կանոնագիր պետական խորհրդոյ. յոգ. 31 էջ 6 եւ 22)

33. Ազգ. ժողովը կրնայ ներկայացնել գոյութիւն ունեցող օրէնքներու ջնջման կամ բարեփոխութեան, կամ նոր օրէնքներու ծրագրեր։ (տես էջ 62 եւ 67)

34. Ազգ. ժողովը կրնայ պահանջել նախարարներէն եւ նահանգներու տրնօրէններէն, որոնք պատասխանատուն վարիչ ծերակոյտին, (կանոնագիր վարիչ ծերակոյտին էջ) որպէս զի իրեն տեղեկութիւններ հաղորդեն նախարարներու եւ տնօրէններու, ինչպէս նաեւ իրենց ստորադասեալներու—պաշտօնեաներ ու հաստատութիւն—արարքներուն վրայ, որոնք յաջո Ազգ. ժողովոյ օրէնքներուն եւ վեհապետական իշխանութենէն բղխող հրամաններուն մասս կը հակասեն։

Գ. ԵՐԲՈՐԴ

Ազգ. ժողովոյ իշխանութեան տարածութիւնը.

37.— Ազգ. ժողովը իր ձեռնհաս

ութեանը պատկանող գործերուն մէջ կարծիքի կատարեալ ազատութիւն կը վայելէ, բայց պէտք է որ անոնց հիմէն չհեռանայ եւ իր նկատողութիւնները հաստատէ ստոյգ դատաստաններու վրայ։

38 Ազգ. Ժողովոյ խորհրդակցութիւնները, իրեն յանձնուած գործերու մասին, եզրակացութեան ձեւով, պէտք հաղորդուին պետական խորհրդոյ, որ կրնայ, երբ կարեւոր համարի, Ժողովին վերադարձունել գործը կրկին աչքէ անցունելու եւ լրացուցիչ եզրակացութիւններ աւելցունելու համար։

39. Ազգ. Ժողովոյ եւ պետական խորհրդոյ անդամոց մեծամասնութենէն մերժուած օրէնսդրական առաջարկութիւնները չեն ենթարկուիր վեհապետի դատաստանին, այլ կը վերադարձուին ձեռնհաս Նախարարին կամ Նահանգի տնօրէնին լիովին ուսումնասիրելու համար։

40. Ազգ. Ժողովոյ եւ պետական անդամոց մեծամասնութեան կամ այս հաստատութեան ընդհանուր ժողովներու մէկէն ընդունուած ծրագրերը կը մատուցանեն վեհապետին որոշման, պետական խորհրդոյ օրէնքին մէջ ցոյց տրուած ձեւով։

(Շարունակելի)

«ԲՕԹԷՄՔԻՆ»Ի ՆԱՒԱԶՆԵՐԸ

Քնիազ Բօթէմքին ռուս զրահաւորի նաւազներէն երեքը այժմ Բարիզ գտնուելով, ֆրանսական թերթերուն հետեւեալ յայտարարութիւնը տուած են,

«Մենք կուզանք դիմակազերծ ընել այն նողկալի զրգռումը որ նպատակ ունի ազգայնական ատելութիւն արծարծել եւ ծնունդ տալ ալ աւելի ապուշ նախապաշարումներու Հրէից, Հայոց եւ Բոլոնացւոց դէմ, ասոնց վերագրելով այն յարձակումները զորս կը մղեն գործաւոր Ռուսիոյ ներկայացուցիչները արտմտած ու զզուած տիրող վարչութենէն։

«Այս վայրկեանին մինչ չունենալով վկայութիւնը քաղելու Բօթէմքինի բոլոր նաւազներուն՝ որոնք Եւրոպիոյ ամէն կողմը ցրուած են, ստորագրեալքս որ նոյն զրահաւորին վարչութիւնը ի ձեռին ունէինք եւ պատասխանատուութիւնը ստանձնած էինք յարժումին, մենք՝ որ մինչեւ վերջին վայրկեանը նաւին մէջը մնացինք, կը յայտարարենք թէ բացարձակ սուտ է կառավարութեան այն վերագրումը որ իբր թէ ուսանողներու եւ հրեայ գործաւորներու դրդումովը ապստամբութիւնը պայթած ըլլայ։

«Մենք կռուեցանք ու պիտի շարունակենք կռուիլ բոլոր ռուս ժողովուրդին ազատութեանը համար. մեր բոլոր ծրագիրները վճռուած ու վճռուած էին նաւազներու մեծամասնութեան ձայնովը, եւ հրեայ մը իսկ չէ գտնուած բայց մը ոչ 267 թիւ թօրբիլյանաւուն վրայ, ոչ Բօթէմքին Գէօրկի Բօբիէտօնօսեցով ի ղրկուած պատուիրակութեան մէջ եւ ոչ ալ նոյն ինքն Բօթէմքինի վրայ։

«Մենք բոլոր աշխարհի գործաւորները մեր ընկերները կը նկատենք առանց խտրութեան ցեղի եւ ազգի եւ ընդհանրապէս այն բոլորը՝ որոնք կը կռուին իրապէս երկրի վրայ հաստատելու համար ազատութեան հաւասարութեան եւ եղբայրութեան արդար սկզբունքները։»

Երեք ստորագրութիւններ

ԱԶԳԱՅԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՎԻՃԱԿԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիւանապետ Տէր Կորիւն վրդ. հետեւեալը գրած է իր մասնաւոր նամակաւ Գահիրէի մէջ Էջմիածնայ Ս. Աթոռին համար նըպաստ հանգանակող Յանձնաժողովոյ նախագահ Տ. Աւետիս քհյ. Շաղոյեանի.

«Նորին Սրբութիւնը լսելով Յանձնաժողովիդ ջանքերը, սարհաճեց հրամայել ինձ յայտնել Ձեզ իւր հայրական օրհնութիւնը եւ գոհունակութիւնը, պարտք դնելով Յանձնաժողովոյդ վրայ ըստ կարելւոյն աշխատիլ արդիւնաւոր կացուցանել, զի խիստ անձուկ վիճակի մէջ է այժմ Մայր-Աթոռը մանաւանդ որ սրանից յետոյ աւելի կը լինի նեղութիւնը, երբ սկսինք ցորեան էլ գնել դրամով. օրական մօտաւորապէս 700 հոգւոյ հաց հասցնելու, զի ունինք 250 գիշերօթիկ աշակերտ, մօտ երեսուն միաբան, մօտաւորապէս 60–70 ծառայողներ, աղքատներ եւն։ Սոքա օրական երկու անգամ հաց են ուտում, որ մօտ 700 ի կը հասնի գումարը։ Մինչեւ ցարդ ունէինք մեր շտեմարանում ցորեան ամբարած. նա էլ կը վերջանայ, տակաւին մի որոշ պատասխան չը կայ մեր կալուածական հարցի վերաբերեալ խնդրոյ մասին։

Տ. ԷԳՆԱՅԵԱՆԻ ՈՐԲԵՐԸ

—«Բարիզի հայ որբերու խնդիրը» խորագրով տետրակ մը ստացանք, որ հրատարակուած է խումբ մը բարիզաբնակ Հայերու կողմէ։ Այս տետրակը լի ու լի կը հաստատէ ասկէ քանի մը ամիս առաջ «Բիւզանդիոն»ի մէջ գրուած յօդուածներու պարունակութիւնը նոյն խնդրոյ մասին, ու չքմեղելով Տ. Էգնաեանը իբր անկեղծ բարերար մը, կը դատապարտէ Տ. Բասմաջեանը, որ որբերը ապերախտ ըմբոստացումի մը դրդած է և հետեւաբար պատճառ եղած անոնց վերջին դժբաղդութեան։ Պոլիս ղրկուած որբերէ մէկին Տ. Էգնաեանի ուղղած նամակին հետեւեալ երկու տողը կը բաւէ պարզելու Տ. Բասմաջեանի տխուր դերը.

«. . . գիշեր եւ ցերեկ անհանգիստ եմ, խղճիս խայթէն տապկվում եմ որ կեղծ ու վատահոգի Բասմաջեանցին խորհրդով մեզ անբաղդացրինք եւ ապերախտ գտնուեցանք դէպի Ձեր բարերարութիւնը . . .։»

Ուրիշ որբ մը Պոլսէն գրած նամակին մէջ կըսէ՝

«. . . Դատարան դիմելն ալ իր տուած խորհուրդն է. առանց մեզ հարցնելու եւ առանց մեր ներկայութեանը է խմբագրած, որ կուրօրէն մեզ ստորագրել տուեց թէ չէ ո՞վ է լսեր որ որդեգիր մը իր բարերար հօր դատարան է քաշել. ո՛հ, այս ինչ ապերախտութիւն էր. նախ քան ստորագրելս պ. Արսէնին ներկայութեամբ երկու անգամ իրեն ըսի որ բարերարին դիմենք վստահ ենք ան պիտի կարգադրէ, բայց 'ի զուր . . .»

Հոս յիշուած Արսէնը Ղումրուեանցն է, որ ըստ Էլմասեանի հաւաստումներուն «Հրայր» ստորագրութեամբ Շարժում ի մէջ Տ. Էգնաեանի դէմ հայոյալից յօդուածներով երեք միլիոն ֆրանկ կը ջանար անկէ, զանի դաւաճաններու կարգը դասելու սպառնալեօք։ Այս այն Արսէնն է որ Բարիզի Թուրք դեսպանատան մինչդեռ հայրենիք երթալու համար Թուրք ըլլալու ապրըգ փաթթելու յանձնառու ըլլալը խոստովանեցաւ հրապարակաւ։ Այս այն Ղումրուեանցն է զոր Պուգրէշի մէջ մօտէն ճանչցողները հրապարակաւ որակեցին իբր անորակելի բաղդախնդիր մը։ Եւ նոյն մարդը անցեալ օր Բարիզի մէջ Ասպարէզ անունով տետրակ մը հրատարակեց և անով, հայ յեղափ. կուսակցութիւն մը վարկաբեկելու տենդէն բռնուած, սոոր մատնութիւն մը ըրաւ։

ՍՈՒԼԹԱՆԻՆ, անձին դէմ սարքուած դաւը իր բուն նպատակէն վրիպած ըլլալուն առթիւ, Օրմանեան պատրիարք հայ եկեղեցիներուն շրջաբերականներ ուղղելով, գոհաբանական արարողութիւններ կատարել տուաւ։ Աւելորդ է յիշել թէ Պոլսոյ հայ և Թուրք թերթերը ինչ այլանդակութիւններ չը գրեցին դաւադիրներու հասցէին, որոնք— ինչ ցեղի որ ալ պատկանին— իրենց կեանքը զոհելու գնով մարդկութեան բարիք մը ընել ուզած էին անշուշտ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պատերազմավայրէն հասնող լուրերը վերջին շաբաթներուս վճռական քայլ մը թէեւ չեն իմացներ բայց բոլորովին ալ անկարեւոր չեն։ Ցամաքին վրայ Թիւմէն գետին կիրճին մօտ անցեալ շաբթու մղուած ճակատամարտը բաւական արիւնալից եւ բուռն էր։ Ճաբոնցիք 30000 հոգիով այդ յարձակումը կատարեցին Հազէկավա զօրավարին հրամանատարութեամբ։ Ռուսերէն չորս անգամ ետ մղուեցան Ճաբոնցիները որովհետեւ դիրքերնին շատ ամուր էր։ Մանչուրիոյ սապէս կը հեռագրեն Ռէ. թըր ի «Վերջին» շաբթուն մէջ Ճաբոնական բանակին արեւելեան թեւը յաջողած էր, հիմակ ալ արեւմտեան թեւը նոր հրամանի մը վրայ սկըսաւ յառաջանալ. միայն Նօկի զօրավարը կը մնայ իր տեղը։ Նոծու, Օքու եւ Քուրօքի զօրավարները իրենց բանակները համախմբած են արեւելեան կողմը։ Ճաբոնները արագօրէն կը յառաջանան։ Հազէկավա զօրավարը, Թիւմէն գետին քովերը յարձակումներ կընէ։ Ճաբոնցիներուն այս միաժամանակ յարձակումները նպատակ ունին թոյլ չտալ Լինէվիչի որ Վլատիվօսթօքի օգնէ». Վլատիվօսթօքի պաշարումին արդէն ձեռնարկուած է. Ճաբոնական թօրփիլանաւերու խումբ մը այդ ամրութեան եզերքներէն կը յածի, բայց Ռուսերը այդ կողմերը ամրացուցած ըլլալով, ճաբոնցիք բաւական հեռուները միայն կը յաջողին գնտակոծ հանել։ Թօքիօէ Բարիզ ընտացուած հեռագրի մը նայելով, Օխամա մարաջախտը իր վեհապետին ղրկած տեղեկագրին մէջ ըսած է թէ հաստատապէս կը յուսայ որ մինչեւ աշուն Ռուսերը Մանչուրիայէն բոլորովին վանէ եւ Վլատիվօսթօքն ալ գրաւէ։

Պատերազմի վիճակը այս ըլլալով, երկու կողմին հաշտութեան բանագնացները արդէն ճամբայ ելած են։ Ճաբոնի առաջարկելիք պայմանները տակաւին որոշ չեն գիտցուիր։ Մ. Վիթէ Բարիզի մէջ նախարարներուն հետ երկար տեսակցութիւններ ունեցաւ, բայց զգուշացաւ լրագրապետներու հետ իր լիազօրութեան մասին որոշ բան մը ըսելէ։ Նա միայն յայտնեց թէ եթէ Ճաբոնի կողմէ ծանր պայմաններ առաջարկուին հաշտութիւնը շատ հաւանական չը կարծեր, քանի որ Ռուսիոյ մէջ ուժեղ կուսակցութիւն մը կայ որ կուզէ պատերազմը շարունակել։ Բայց մենք կը կարծենք թէ այս իմաստով յայտարարութիւններու նպատակն է Ճաբոնցիները զգուշացնել ծանր պայմաններ առաջարկելէ։ Ռուսիոյ ներքին խռովութիւնները սարսափահար ըրած են տիրող իշխանութիւնը, որ երկու սուրի մէջ տեղ մնացողի վիճակ մը ունի այսօր։ Զարը բոլորովին շուարած առէր օր գնաց Գերմանիոյ կայսեր հետ տեսակցելու ու խորհուրդ ստանալու։ Կը կարծուի թէ ռուսօ-գերման համաձայնութիւն մը կայացնելու վրայ կը դառնայ խընդիրը։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Վարժարանիս հոգաբարձութիւնը հըրապարակաւ կը յայտնէ իր ամենամեծ շնորհակալիքը Ֆիլիպէի, Սօֆիայի, Շումլայի, Րուսչուգի, Սիլիսդրէի, Յամբոլի, Պուրկազի, Սլիվէնի պատ. թաղ. խորհուրդներուն, ինչպէս նաեւ Պորխովկրատի արգոյ ազգային տիար Ս. Մէրհամէթճեանի, որոնք ի նպաստ վարժարանիս շրջաբերութեան ելած վեճակահանութեան տոմսերու սպառման մէջ ունեցան իրենց նիւթական եւ բարոյական մասնակցութիւնը։

Նաեւ հոգաբարձութիւնս կուգայ յայտարարել թէ՝ վիճակահանութիւնը տեղի ունենալով 44 թիւը շահեցաւ վարժարանիս աշակերտներէն Յարութիւն Պ. Թղլեանը։

Ի դիմաց հոգաբարձութեան

Ատենադպիր — Ատենապետ

Թ. Միրճանեան — Յ. Գէորգեան

10 յուլիս 1905

Թ. Բազարճըգ

Ա Զ Դ

Ռումանիոյ Ֆօքշան քաղաքի Հայոց եկեղեցւոյն համար պէտք է ուսեալ, բարեկիրթ եւ իւր նուիրական կոչումին լաւ ճանաչող քահանայ մը։

Նոյնպէս միեւնոյն բարեխառնութեամբ օժտեալ երաժիշտ մը՝ քաղցրաձայն ձայնիւ։

Փափաքողները դիմեն գրաւոր որոշ տեղեկութեամբք ու միանգամայն ազգային պաշտօնական վկայութեամբ առ

Հոգաբարձութիւն Հայոց

(Ռումանիա) ՖՕՔՇԱՆ

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻՒՐՔԻԱ

Սթանպօլ կազէթալարըն պէյանը իւզրէ, կէչէն ճումաա կիւնիւ Եըլտըզ մէյտանընտա աթըլան պօմպատան 28 քիշի եարէլէնմիշ վէ 24 քիշի եօլմիւշ ։ Եարէլէնէնլէրտէն պիրինին պէյանընա պինաէն, պիր մէճհուլ չախս օլ եօնատէ պիր զէնպիլ կէթիրուպ ֆայթօնլարտան պիրինէ գօյմուշ, պիր ազ սօնրա իչինտէքի բաթլամըշ ։

Աժանս Ռոյթէռ Աթանպօլտան պիլտիրիլտիկի իւզրէ, միւթէճասըրը գաչմըշ վէ պիր պուլկար զանն օլընմագտա ըմըշ ։ Թահգիգաթ տէվամ իտէյօր ։ Պուլկարլարտան Էրմէնիլէրտէն չօգլար քէզա սայիր միլլէթլէրտէն տէրտէսթ օլընմըշլար տըր ։ Եըլտըզըն մուհաֆազասը իչիւն բէք սըգը թէտպիրլէր ըլէ ալմըշլար ։

Վուգուաթտան սօնրա էլչիլէր այնը մասալտա մէքթուպլար գապու իթմիշլէր. պու մէքթուպլարըլէ Թիւրքիանըն ույկունըզ իտարէի հազըրէսի վէ Էվրոբանըն վաղիֆէսիզլիկի իւթիլալ ֆըրգասընը (յեղափ. կուսակցութիւն) տէհչէթլի ամէլիաթա մէճպուր իտէյօր տէնմիշ տիր ։ Մէզքիւր ճինայէթի Էրմէնիլէրէ աթֆ իթմէք վէ չիւբհէլի անլերէ համլ էյլէմէք իչիւն պու մէքթուպլար սախթէ վէ ույտուրմա զանն օլընըյօր ։ Պու խուսուստա տախի թահգիգաթ պաշլամըշ տըր ։

—Սթանպօլտան Սօֆիա կազէթալարընա եազըլան պիր մէքթուպ, իւխթիանլարա գարշը իքինճի պիր գըրկըն թէրթիպ օլընմագտա օլտըղընը թէֆհիմ իտէյօր ։ Զիրա վուգուաթ էսնասընտա՝ Սուլթանըն մուհաֆազասընա այիտ օլան արնավուտլար կէօրիւքլէրի էճնէպիլէր իւզէրինէ աթէշէ տավրանմըշլար վէ օնտան պէրու իւխթիանլարըն վաղիյէթի թէհլիքէլի պիր հալ քէսպ իթմիշ տիր ։ Պու սէպէպլէ պունտան սօնրա Սէլամլըգտա ճումաա կիւնլէրի էճնէպի սէյիրճիլէր գապուլ օլընմայաճաղը իլան օլընտը ։

—Աժանս Բէյթըր ըն իխպարը իւզրէ, Ահմէտ Ֆէյզի բաշա 3 թապուր արնավուտ ասքէրլէրէ յուլիս 4 տէ իւչ թարաֆտան Ցանյա տօղրու իլէրլէմէքտէ օլուպ, Մէնշայա եագըն ասըլարը մէվգըլարընտան կէրի սիւրմիւշ։ Ֆագաթ 3 թապուր ասքէրլէ վուգու պուլան միւսատէպէի Ինկիլիզլէր էհէմմիյէթսիզ ատտ իտէյօրլար ։

—Սթանպօլ 12 յուլիս—Ասքէրիյէ տաիրէլէրինտէ րէվայէթ օլընտըղը իւզրէ, 3 թապուր Թիւրք ասքէրլէրի Մահմուտ Եահեանըն օրտասը իւզէրինէ եէնի պիր ֆիթուհաթ կէօթիւրմիւշ օլտըգլարը Ֆէյզի բաշա Մէնախատան պիլտիրմիշ ։

Պու տախի Ռէյթըր ըն վէրտիկի այնը հավատիս տիր ։

—Թիւրքիանըն «էսկի Սերպիա» թապիր օլընան գըթաա Արնավուտլար եէնիտէն գըրկընա պաշլամըշ վէ Սերպիա իլէ մուխապէրաթ քէսիլմիշ օլտըղը վէ պու եօլտա ույկունսըզլըգլարըն թէքրարլանմասը սէպէպի իլէ Աւստրիանըն իշէ միւտախէլէ իթմէկէ մէճպուր օլաճաղը Սթանպօլտան յունիս 13 թարիխլի թէլէկրաֆլէ պիլտիրիլիյօր ։

—Պալը Ալինին ալտըղը մալիւմաթ իւզրէ, Սարաֆօվըն գօմանտասը ալթընտա պիր պուլկար չէթասը բէրչէնպէ կիւնիւ Սէլանիք վիլայէթի տախիլինտէ Ցուարանտա 52 իսլամ գաթլ իթմիշ ։

Բէզա Սարաֆօվըն պիր չէթասը ճումաա էրթէսի կիւնիւ 7 իսլամ գաթլ էյլէմիշ օլտըղը Սթանպօլտան Ա. Ռոյթէռ պիլտիրիյօր ։

ՌՈՒՍԻԱ

Չար կէչէն կիւն իմբէրաթօր Վիլհէլմին սէյահաթընտան իսթիֆատէ իտէրէք, վարօփլէ կիտուպ տէնիզ իւզէրինտէ կէօրիւշտիւլէր ։ Չար պիր գաչ վիւքէլատան մաատա Կրանտիւք Միխայիլ Ալէքսանտրովիչի պէրապէր կէօթիւրմիւշ իտի ։ Իքի իմբէրաթօրլարըն նէ մէսէլէլէրտէն պահս իթտիքլէրի բէօյլէն անլաշըլամամըշ իսէտէ, Ռուսիանըն հիւքիւմէթ տաիրէլէրինտէ մէսէրրէթ հուսուլա կէթիրմիշ տիր ։ Րէվայէթէ կէօրէ, Չար տախիլի իսլահաթ իչիւն Վիլհէլմին էֆքեարընը սօրմուշ վէ Վիլհէլմ չու տախիլի գարըշըգլըգլարընտա իսլահաթ իճրասը քեարը—ագըլ օլմատըղընը պէյան իթմիշ տէյօրլար ։

Պունտան մաատա, Չար Ալմանիա իլէ պիր իթթիֆագ թէչքիլի թասավվուրընտա օլուպ, պու պապտէ Վիլհէլմի իսթիզան իթմիշ տէյօրլար ։ Ֆրանսա Ինկիլթէրայա եագլաշտըղը սէպէպլէ Չար պաշկա պիր միւթթէֆիգ արամագ մէճպուրիյէթինտէ պուլընըյօր. պա խուսուս գուվվէթտէն տիւշկիւն օլտըղը չու սըրալարտա՝ Էվրոբա գըթաասընտա թէեսիրինի պիւթիւն պիւթիւնէ այագ ալթընա վէրմէմէք իչիւն՝ պիր գուվվէթէ տայանմագ իգթիզա կէօրիյօր. զիրա չիմտիտէն տահա Թիւրք պիլէ Ռուսիայը սայմամայա պաշլամըշ տըր.

—Նովօչէրքասքտէ 6 թապուր գազագլար տախիլի գավկալարա կիրմէք վէ քէնտի րուս գարտաշլարընը գաթլ իթմէք խըթէմէտիքլէրինի պիլտիրտիլէր ։ Շու հալտէ իչէրքի գարըշըգլըգը պաստըրմագ իչիւն հիւքիւմէթին էն գուվվէթլի ալէթը օլան գազագլարըն պու իթաաթսըզլըղը Չարը վէ բրէնսլէրի քիւլլիէն մէյուս իթմիշ օլաճագ ։

—Թիֆլիս շապթիէ գօմանտանընա սուիգաստ իտէն Մօսկովա տարիւլ-ֆիւնունընտան (համալսարան) պիր թալէպէ իմիշ ։

ՄՈՒՀԱՐԷՊԷ

Մանչուրիատա ճաբօն օրտուլարը իլէրի կիթմէկէ թէքրար պաշլամըշլար տըր ։ Թիւմէն չայըն սահիլլէրինտէ 30000 քիշիլիք պիր ճաբօն օրտուսը օլ ճիվարտան Ռուսլարը կէրի սիւրմէք իչիւն չիտտէթլի հիւճումլար իտէյօր ։ Վլատիվօսթօքտան պիր ազ իրագ ճաբօն տօնանմասը գարայա ասքէր չըգարմըշ օլուպ, հէր թարաֆտան մէզքիւր չէհրի մուհասէրէ իթմէկէ պաշլամըշլար տըր ։ Սախալին ատասընըն էլան Ռուսլարըն էլինտէ օլան եէրլէրի ճաբօնլըլար կիւն պէ կիւն զապթ իթմէքտէ տիրլէր ։

—Ճաբօնըն սուլհ մուրախասլարընտան պիրինին պէյանը իւզրէ, չու մուհարէպէտէ իքի թարաֆտան 570,000 քիշի թէլէֆ օլմուշ, պունլարըն 370,000ի րուս ։ Մուհարէպէնին կիւնտէ 10 միլիօն տոլար մէսարիֆի վար ըմըշ ։

ՍՈՆ ԹԷԼԷԿՐԱՖԼԱՐ

Բեթէրսպուրկ 14 յուլիս

Սապըգ Բեթէրսպուրկ պէլէտիյէ րէյիսի ժէնէրալ Ցուրնով Մօսկովայա վալի նասպ օլընտը ։

Թօքիօ 14 յուլիս

Ճաբօնլըլար Սախալին ատասընըն Ալէքսանտրովսք չէհրինի զապթ իթմիշ տիրլէր ։

Լօնտօն 14 յուլիս

Ինկիլիզ տօնանմասը Օգոստոս սէ սեպտեմբեր այլարընտա Պալթիկ տէնիզինի կէզմէյէ կիտէճէք տիր ։

Սթանպօլ 14 յուլիս

Հիւքիւմէթ թէվգըֆաթա տէվամ իտուպ, Թիւրք, Էրմէնի վէ Պուլկար միլլէթլէրինտէն չօգ քիշիլէրի թութմագտա տըր. ֆագաթ չիմտիյէ գատար հիչ պիր սէմէրէ էլտէ իտիլմէմիշ տիր ։ Պիր գաչ էլչիլէր պու թէվգըֆաթտան տօլայը իմզասըզ արզուհալլէր գապուլ իթտիլէր ։

ՄԻՒԹԷՆԵՎԻԷ

Ռուսիատան վէ սայիր մէմալիքտէն Պուլկարիայա կէլմէք իսթէյէն միւլէթտաշլարըմըզ բասաբօրթսըզ կէլմէմէլի տիրլէր. զիրա պուրատա իչէրի գապուլ օլընմալարը չօգ միւչքիւլ վէ պազը միւմքինսիզ օլիյօր ։

—Մարօք խուլահաթը իչիւն թէճէմմիւ օլընաճագ գօնֆէրանսա Ռուսիա տախի մուրախաս եօլլայաճաղընը պիլտիրմիշ տիր ։ Ֆրանսըզլարա Մարօքտա խուսուսի սէլահիյէթլէր վէրիլմէսի իչին Ալմանիանըն րազի օլմասը Մարօք հիւքիւմէթինէ ֆէնա թէեսիր իթմիշ տիր.

ԹԻՒՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ. Յուլիս 16

ԶԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՑ		
Վակօն	54-60 լիպ.	8.60 / 11. 40½
Արապա	52-62 լիպ.	9. /11.60
ԱՐՊԱ,		
Վակօն 100 քիլօ հին		11. /11. 20
Արապա եէնի	42-47 լիպ.	6. 60 /.7 20
ՃՈՒԼԱՖ արապա	33/36 լպ.	5. 20/5.70
Վակօն 100 քիլօ		9. 40/10. 20
ՖԱՍՈՒԼԵԱ	100 քիլօ	եօգ
ՌԱՓԻՑԱ	100 »	19. 20 19.60
Արապա	100 քիլօ	16—18
ՏԱՐ տրապա	հէքթ.	եօգ
ՔՕԼԶԱ արապա	55-60 լպ.	11./12.80
ՄԻՍԻՐ	57-58 լպ.	6. 40/7.60
»	100 քիլօ	11.20- 11. 90
ՋԱՎՏԱՐ	արապա	7. 70/ 8.
»	100 քիլօ	10. 80 /11.20

կիւնտէ 15—20 վակօն վէ 30—4 արապա կէլմէքտէ. վակօն մուամէլէսի Նաբօլէօն 20 ֆր. արապա մուամէլէսի Նաբօլէօն 20. 20

ՍԱՐՐԱՖԻՅԷ

Նաբօլէօն 20, 20 ֆրանք

Օսմ. լիրասը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱՔԳԱԼԻՅԷ

Վառնա բիւզասընտա պագգալիյէ մալլէրին պու կիւնքի ֆիյաթը, ալթուն ֆրանք իլէ.

ԳԱՀՎԷ	1,95/2 10
ՇԷՔԷՐ նէմչէ	75
ՇԷՔԷՐ քէսմէ] սանտըգ	37. 75
ՊԻՐԻՆՃ Ճէնովա չուվալը	42
» Ճաբօն »	34.
» Ինկիլիզ »	28. 50
Րիզօ »	49.
ԿԱԶ Սանտըգ	11. 60
ԶԷՅԹԻՆ եաղը քիլօ	85.—1
ՖՈՒՐՈՒ իւզիւմ	25

ԸՆՏԻՐ ՔԱՑԱԽ

Զուտ խաղողէ պատրաստուած բնական քացախի նորահաստատ մեր մըթերանոցը առիթ կընծայէ յարգոյ հասարակութեան որ ամէն յետոյ զերծ մնայ խարդախեալ եւ այլեւայլ դեղերով պատրաստուած կեղծ քացախներու վնասներէն ։ Մեր քացախին անարատութիւնը եւ ազդուութիւնը ամէն երաշխիք կ'ընծայէ իր առողջութեան նախանձախնդիր յաճախորդին, որ՝ անգամ մը փորձելով արդէն համոզուած պիտի ըլլայ գերազանցութիւնը ։

Դուրսէն մեծաքանակ յանձնարարութիւնք փութով կը գործադրուին ի հարկին նմոյշ ալ ղրկելով ։

Հասցէ՝
ԱՐՄԵՆԱԿ ԳԱՍԱՊԵԱՆ
Փողոց Գօլօնի թիւ 65 ՎԱՌՆԱ

Одговорникъ А. Курбетиянъ
печатница П. Глушковъ и С-ие—Варна